է Հայտարանցոց ցեղապետ քուրդ Հիւսէին աղէն, երկրի կառաւարիչը, որ երկու հարիւր յիսուն վրանաբնակ քրդեր և քանի թաթարների գիւղեր ունի իւր իշխանութեան տակ:

Աւաջուղի և Գարայ-նիի միջից է անցնում Տաճկապարսկական տրանզիտոնի ճանապարհը:

Փոքր Մասիսի և Դամբատ լեռան մէջն է ընկնում Դամբատ հովիտը, որ թէև դեղեցիկ, բայց բոլորովին ամայի է մնացել: Դորա աւերակները և մեծամեծ ընկուզի ծառերը վկայում են, որ ժամանակով մշակված և ծաղկեալ վիճակի մէջ է եղել: Այստեղ Փոքր Մասիսի արևելեան ստորոտումը գտնվում են մեծամեծ քարայրներ, որոնք դեռ քննված չեն: Դամբատ հովտի վերջին լնակիչները քրդերն էին, որոնք անցեալ սովին մեռան և մնացեալները ցրուեցան:

Այս աշխարհի ամենամեծ գետը Մագու գետն է, որ ոռոգում է Մագուայ դաշտը: Նորա մի ճիւղը սկսում է Տաճկա-Հայաստանի Շիլի լճից, որ Բայազիտի հիւսիսումն, Մեծ Մասիսի ստորոտումն է: Միւս ճիւղը իջնում է Աւաջուղից, որ Սանդիար գիւղի մօտ խառնվում է առաջինի հետ, իսկ երրորդ ամենամեծ ճիւղը բաժանվում է երեք գլխաւոր սկիզբների. առաջինը, Սարիդայիր, սկսվում է Շաւարշ լեռների հիւսիս-արևելեան կողմերից և ոռոգում է Թայզաբարայ հովիտը երկրորդը, Կուսանաց գետը, իջնում է Աւաջուղի հարաւային